ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 229 – Ա «7» փետրվար 2013թ.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N8 հավելվածի 6-րդ կետը և 2002 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Առողջապահության նախարարության կանոնադրության 8-րդ կետի ա) ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում համավճարային սկզբունքով փոխհատուցվող անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի հանրապետության տարածքում գործող պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝
Ի ղեկավարումն ընդունել սույն հրամանով հաստատված չափորոշիչը:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝
Բժշկական կազմակերպությունների հետ պայմանագրեր կազմելիս հիմք ընդունել վերոնշյալ չափորոշչի պահանջները:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հավելված
Առողջապահության նախարարի
7 փետրվարի 2013թ. N229- Ա հրամանի

Հավելվածը խմբագրվել է ԱՆ 26.08.2019թ. Թիվ 2344 - Ա հր.
Հավելվածը խմբագրվել է ԱՆ 11.05.2021թ. Թիվ 1756 - Ա հր.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Սույն ցանկում ընդգրկված են այն հիվանդությունները և վիճակները, որոնց ժամանակ բնակչության բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով՝ համավճարային սկզբունքով:

I. Անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդություններ և վիճակներ

1. Շիճուկային հիվանդություն,
2. Սուր թրոմբոզներ և թրոմբոէմբոլիաներ (բացառությամբ թութքի)՝ միայն վիրահատական միջամտությամբ ավարտված դեպքերը,
3. Գիյեն-Բարեի սուր պոլինեյրոպաթիա՝ պարալիչի զարգացումով,
4. Գլխուղեղի ինսուլտներ՝ բացառությամբ վերակենդանացման բաժանմունքի և «Գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտի բուժում» ծրագրի շրջանակներում իշեմիկ ինսուլտի բժշկական օգնության և սպասարման,

5. Սրտամկանի սուր ինֆարկտ՝ բացառությամբ վերակենդանացման բաժանմունքում և «Սրտի անհետաձգելի վիրահատություն» ծրագրի շրջանակներում իրականացված բժշկական օգնության և սպասարման,
6. Սուր երիկամային անբավարարություն,
7. Ցանցաթաղանթի կենտրոնական անոթների սուր անանցանելիություն,
8. Տեսողական օրգանի վնասվածքներ, ակնախնձորակի ամբողջականության խախտում,
9. Պնևմոթորաքս (սպոնտան և վնասվածքային) վիրահատությամբ ավարտված դեպքերը՝ բացառությամբ միայն պունկցիայով ավարտված դեպքերի,
10. Սեպսիս՝ արյան ցանքսով հաստատված,
11. Տարածուն պերիտոնիտ,
12. Խոռոչավոր օրգանների թափածակում (բացառությամբ որդանման ելունի և լեղապարկի)՝ հաստատված հյուսվածաբանական հետազոտությամբ,
13. Օղակված ճողվածք՝ միայն ՀՀ մարզերի բուժհաստատություններում,
14. Արտաքին և ներքին (երակային և զարկերակային) պրոֆուզ արյունահոսություններ՝ բացառությամբ քթային արյունահոսությունների և թութքի,
15. Ներանոթային տարածուն մակարդման /**ДВС**/ համախտանիշ,
16. Ոսկրերի բաց կոտրվածքներ, փակ կոտրվածքներ բեկորների տեղաշարժով (ողնաշարի ոսկրեր, կոնքի ոսկրեր, բազկոսկր, ճաճանչոսկր, ծղիկոսկր, ազդրոսկր, մեծ ոլոք),

17. Գանգուղեղային (գլխուղեղի սալջարդ) և ողնուղեղի վնասվածքներ,
18. Թափանցող վնասվածքներ՝ կրծքավանդակի, որովայնի, կոնքի օրգանների, գլխուղեղի, ողնուղեղի վնասվածքներով,
19. Պոլիտրավմա (խոշոր ոսկրերի և/կամ ներքին օրգանների համակցված վնասվածքներ)՝ բացառությամբ վերակենդանացման բաժանմունքի,
20. Սուր հեմոլիտիկ կրիզներ, սակավարյունություն (Hb-60 գ/լ և պակաս կամ էրիթրոցիտների քանակը=1.7x 10^{12}/լ և պակաս),
21. Արտարգանդային հղիություն, ձվարանի ապոպլեքսիա,
22. Անոթային անևրիզմաների պատռվածքներ և շերտազատումներ, բացառությամբ աորտայի անևրիզմաների և նյարդավիրաբուժական էնդովասկուլյար ռեկոնստրուկտիվ բուժման,
23. Միոմատոզ հանգույցի, ձվարանի ուռուցքների, ուռուցքանման և թարախային գոյացությունների տոտիկի ոլորում, պատյանի պատռում, հանգույցի նեկրոզ, ծնվող ենթալորձային միոմատոզ հանգույց:

II. Օնկոհեմոտոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ

1. Օրգան համակարգերի ախտորոշված չարորակ նորագոյացությունների քիմիաթերապևտիկ բուժում,
2. Օնկոհեմատոլոգիական հիվանդությունների (Հոջկինյան և Ոչ Հոջկինյան լիմֆոմաներ) քիմիաթերապևտիկ բուժում:

III. Սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ

1. *ուժը կորցրած է ճանաչվել (ԱՆ 11.05.2021թ. թիվ 1756 - Ա հր.*),
2. Միկրոսպորիա և տրիխոֆիթիա,
3. Պսորիատիկ էրիթրոդերմիա և արթրոպատիա,
4. Բշտային մաշկախտեր: